# ԹԵՄԱ 4 ՄԻՋՆԱԴԱՐԻ ԱՎԱՐՏԸ: ՓՈՓՈԽՎՈՂ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## § 49. ԵՎՐՈՊԱՅԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ

1

**«Ժակերիան» Ֆրանսիայում**

Հզոր գյուղացիական ապստամբություն տեղի ունեցավ Ֆրանսիայի հյուսիս-արևելքում Հարյուրամյա պատերազմի ընթացքում: Այն պատմությանը հայտնի է Ժակերիա անունով: Ապստամբների ղեկավարն էր գյուղացի Գիլյոմ Կալը: Ավատատերերը դժվարությամբ ճնշեցին ապստամբությունը, իսկ Գիլյոմ Կալին տանջամահ արեցին:

Ապստամբների դրոշին պատկերված էր թագավորական զինանշանը՝ սպիտակ շուշան: Ձինվելով ինչով պատահի, «Ժակերը» սպանում էին ավատատերերին և ավերում նրանց դղյակները:

Ապստամբների ամենամեծաթիվ ջոկատի հրամանատար դարձավ գյուղացի Գիլյոմ Կալը: Նա ձգտում էր միավորել «Ժակերին» և կարգ ու կանոն մտցնել գյուղացիական զորքերի մեջ: Սակայն նրան չհաջողվեց միավորել բոլոր ապստամբներին, քանի որ շատ գյուղացիներ սահմանափակվում էին միայն իրենց տերերի դեմ կռվելով:

Ավատատերերը փախչում էին ապստամբությամբ ընդգրկված տարածքներից: Սակայն կարճ ժամանակ անց նրանք համախմբվեցին և մեծ զորք հավաքեցին: Ֆրանսիական ազնվականներին օգնում էին անգլիական զորքերը: Վճռական ճակատամարտից առաջ Գիլյոմ Կալը իր ջոկատները դասավորեց բլրի վրա և ճամբարը շրջապատեց սայլերով: Տեսնելով, որ ապստամբները պատրաստվում են հակահարվածի, ազնվականները որոշեցին նրանց խաբել: Նրանք ապստամբների հետ զինադադար կնքեցին և նրանց առաջնորդին հրավիրեցին բանակցությունների: Կալը դյուրահավատությամբ եկավ ազնվականների ճամբարը, ուր նրան բռնեցին և շղթայակապ արեցին: Ազնվական ասպետները գրոհեցին գյուղացիների ջոկատների վրա և պարտության մատնեցին նրանց: Ազնվականները դաժանորեն

վրեժ լուծեցին ապստամբներից: Կալի գլխին մահապատժից առաջ շիկացած երկաթե օղակ հագցրին: Ասպետները ավերում էին գյուղերն ու գյուղացիական դաշտերը, կախում էին գյուղացիներին ծառերից և խրճիթների դռներից:

**Գյուղացիական պատերազմը Անգլիայում Ուոտ Թայլերի գլխավորությամբ**

1381 թ. գյուղացիական ապստամբություն բռնկվեց Անգլիայում Ուոտ Թայլերի գլխավորությամբ: Լոնդոնից հյուսիս գտնվող մի քանի գյուղերի բնակիչները փախուստի մատնեցին հարկահավաքներին ու հաշվեհարդար տեսան թագավորական աստիճանավորների հետ: Դա ապստամբության համար ազդանշան հանդիսացավ, մի քանի օրվա ընթացքում այն ընդգրկեց երկրի մեծ մասը: Զինված կացիններով, եղաններով ու նետ-աղեղով ապստամբները միավորվում էին ջոկատներում և ավերում ավատատերերի կալվածքներն ու վանքերը, այրելով այն փաստաթղթերը, որոնցում գրված էին գյուղացիների պարհակները և հարկատուների ցուցակները:

Գյուղացիների առաջնորդ դարձավ Ուոտ Թայլերը: Լինելով Հարյուրամյա պատերազմի մասնակից, տիրապետելով ռազմական գործի նրբություններին, նա աշխատում էր կարգ ու կանոն հաստատել գյուղացիական ջոկատներում:

Լոնդոնի մերձակա երկու կոմսությունների գյուղացիները շարժ-վեցին դեպի մայրաքաղաք՝ հույս ունենալով, որ բարի թագավորը կհասկանա և կթեթևացնի իրենց վիճակը:

Լոնդոնի չքավորների աջակցությամբ ապստամբները մտան մայրաքաղաք և սկսեցին ավերել ատելի թագավորական խորհրդա-կանների պալատները և դատարանների շենքերը, սպանել դատավորներին և աստիճանավորներին:

Թագավորը իր պալատականներով պատսպարվեց Թաուեր դղյակում: Ապստամբները պաշարեցին ամրոցը. վախեցած թագա-վորը համաձայնեց հանդիպել ապստամբների հետ: Ապստամբները հանդիսավոր ձևով հանձնեցին իրենց պահանջները:

Թագավորը խոստացավ թեթևացնել հարկերը և ներել ապստամ-բության բոլոր մասնակիցներին: Շատ գյուղացիներ, հավատալով թագավորին, հեռացան Լոնդոնից: Բայց ավելի վճռական տրա-մադրվածները մնացին և Ուոտ Թայլերի գլխավորությամբ լրացուցիչ պահանջեցին բոլոր մարդկանց տալ հավասար իրավունքներ: Բանակցությունների ժամանակ պալատականները դավադրաբար սպանեցին Ուոտ Թայլերին:

Կորցնելով իրենց ղեկավարին և հավատալով թագավորական խոստումներին՝ ապստամբները հեռացան մայրաքաղաքից: Լոնդոնից հեռանալուց հետո, նրանց վրա հարձակվեցին ասպետները և մեծ մասին կոտորեցին: Ապստամբությունը ճնշվեց, բայց դա դաս եղավ ավատատերերի համար: Վերացվեցին չքավորների դեմ դաժան օրենքները, ավատատերերը հրաժարվեցին կոռից, և գյուղացիները փրկավճարով ազատվեցին ճորտությունից:

2

Փրկագին վճարելով՝ գյուղացին ազատ կարող էր տիրոջ մոտից հեռանալ, առանց նրա թույլտվության ամուսնանալ, գույք ժառանգել, ազատված էր կոռային աշխատանքներից: Սակայն հողը մնում էր ավատատիրոջ սեփականությունը, և հողի վարձակալության դիմաց գյուղացիները պարտավոր էին ռենտա՝ հողավարձ վճարել: Կարևորը այն էր, որ գյուղացին արդեն ինքնուրույն, ազատ տնտեսվարող էր և շահագրգռված էր առավել շատ եկամուտ ստանալու:

3

Նման ներկայացուցչական մարմին առաջինը ձևավորվեց Անգլիայում XIII դ. երկրորդ կեսին: Թագավորի հատուկ հրավերով մայրաքաղաք Լոնդոն էին գալիս արքեպիսկոպոսները, եպիսկոպոսները, մեծ վանքերի վանահայրերը և հողատեր բարոնները: Բացի սրանցից, յուրաքանչյուր կոմսությունից երկու ասպետ և յուրաքանչյուր քաղաքից երկու քաղաքացի ընտրվում էին ներկայացուցիչների ժողովի անդամ: Անգլիայում այդ ժողովը կոչվեց պառլամենտ: XIV դ. կեսերին պառլամենտը բաժանվեց երկու պալատի՝ լորդերի և համայնքների: Լորդերի պալատում նիստեր էին անում հոգևոր և աշխարհիկ բարոնները, իսկ համայնքների պալատում՝ ասպետներն ու քաղաքացիները:

4

**«ՊԱՊԵՐԻ ԱՎԻՆՅՈՆՅԱՆ ԳԵՐՈՒԹՅՈՒՆԸ»**

Թագավորական իշխանության ամրապնդմանը և կենտրոնացված պետությունների կազմավորմանը մեծապես խանգարում էին Հռոմի պապը և կաթոլիկ եկեղեցին: Պապի վասալն էին համարվում Եվրոպայի շատ միապետեր: Երբ Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ IV-ը փորձեց եկեղեցին ենթարկել պետությանը և պահանջեց, որ Ֆրանսիայի հոգևորականները հարկ վճարեն, Հռոմի Պապը դա արգելեց և թագավորին էլ բանադրեց՝ արգելեց եկեղեցի մտնել:

Այդժամ Ֆիլիպ IV-ը դիմեց դասերի ներկայացուցիչների օգնությանը: 1302 թ. նա հրավիրեց Գլխավոր Շտատներին և

ստանալով նրանց աջակցությունը այդ հարցում՝ դիմեց վճռական միջոցների: Թագավորի մարդիկ մուտք գործեցին պապական արքունիք և անպատվեցին Պապին, որը, չտանելով վիրավորանքը, շուտով մահացավ:

*Ավինյոն, պապական պալատը*

Ֆիլիպ IV-ը միջամտեց նոր Պապի ընտրությանը և անցկացրեց իր թեկնածուին: Նորընտիր Պապը թագավորի պահանջով պապական նստավայրը Հռոմից տեղափոխեց Ավինյոն քաղաք՝ հարավային Ֆրանսիայում: Պապերը ***«Ավինյոնյան գերության»*** մեջ մնացին 70 տարի: 1378 թ. Պապերի նստավայրը կրկին տեղափոխվեց Հռոմ, սակայն պապականության երբեմնի հեղինակությունը անդարձ վերացավ: